

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15

«Նորավանք» գիտակրթական
հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 2004 թ. մարտի 2-ի նիստի

- Ա.Մարգարյան - ՀՀ վարչապետ, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ
- Տ.Մարգարյան - ՀՀ կենտրոնական բանկի նախագահ, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
- Կ.Կիրակոսյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի տեղակալ, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
- Ա.Ավետիսյան - ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
- Մ.Լալայան - «Հանրապետական» կուսակցության խորհրդի անդամ
- Գ.Հարությունյան - «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրեն
- Մ.Մկրտչյան - «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տնօրենի տեղակալ
- Ս.Սեյրանյան - «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տնօրենի տեղակալ
- Թ.Վարդանյան - «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հետազոտող-փորձագետ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի 2003թ. գործունեության հաշվետվության, 2004թ. գործունեության ծրագրի մասին

(Ս.Սեյրանյան, Մ.Մկրտչյան, Գ.Հարությունյան, Մ.Լալայան, Ա.Ավետիսյան, Կ. Կիրակոսյան, Տ.Մարգարյան, Ա.Մարգարյան)

Որոշեցին.

- 1.Հաստատել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի 2003թ. 2-րդ կիսամյակի գործունեության հաշվետվությունը:
- 2.Շնորհունել ի գիտություն, որ 2004թ. շարունակվելու է «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հետևյալ երեք ծրագրերը
 - 2.1 «ՀՀ ներքաղաքական դաշտի զարգացումների ուսումնասիրություն», որի շրջանակներում ընդգրկել հետևյալ նոր ենթածրագիրը՝

«Հասարակական կազմակերպությունների դերը ՀՀ հասարակական կյանքում. իրադրությունը և զարգացման հեռանկարները», որի համատեքստում կապեր հաստատել ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության հետ:

2.2 «Տարածաշրջանային քաղաքական և տնտեսական զարգացումների մոնիտորինգ», որի աշխատանքներին ներգրավել պրոֆեսոր Ռ. Սաֆրաստյանին:

2.3 «Հնարավոր ինովացիոն գործընթացների հետազոտություն»:

3. «Նորավանք» ԳԿՀ-ի 2004թ. գործունեության համար հաստատել հետևյալ նոր ծրագիրը՝

«Նորավանք» ԳԿՀ-ի աշխատանքներին Սփյուռքի մտավոր ներուժի մասնակցության մեխանիզմների մշակում», որի համատեքստում կազմակերպել ինովացիոն թեմայով կոնֆերանս Սփյուռքի ներկայացուցիչների մասնակցությամբ:

4. Հանձնարարեցին «Նորավանք» ԳԿՀ-ին՝

մշակել «Նորավանք»-ի զարգացման ռազմավարությունը և կազմակերպել խորհրդակցություն հոգաբարձուների խորհրդի անդամների մասնակցությամբ «Նորավանք» ԳԿՀ-ում՝ մինչև սույն թվականի ապրիլի 15-ը,

քննարկել «Հանրակրթության պետական կրթակարգը» և արդյունքները ներկայացնել ՀՀ վարչապետին,

վերլուծել արտերկրի ուսումնական հաստատությունների ցանկը, որտեղ ուսանում են ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից գործուղված երիտասարդները և արդյունքները ներկայացնել ՀՀ վարչապետին,

«21-րդ դար» հանդեսի բաժանորդագրության համար առաջարկություններ ներկայացնել պետական կառավարման մարմիններին,

«Նորավանք» ԳԿՀ-ի կողմից դրամաշնորհի ստանալու նպատակով ներկայացվող ծրագրերն իրականացնել արդեն իսկ գործող «Անցումային հասարակության հետազոտության ինստիտուտ» հասարակական կազմակերպության միջոցով,

ներկայացնել «Նորավանք» ԳԿՀ-ի Ամաղու գյուղի հողատարածքում շինարարական վերանորոգման աշխատանքների կազմակերպման վերաբերյալ առաջարկություն (համակարգող՝ «Նորավանք» ԳԿՀ-ի հոգաբարձուների խորհրդի անդամ Տ. Մարգարյան):

5. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարար Կ. Ճյուրիտյանին, ՀՀ արտաքին գործերի նախարար Վ. Օսկանյանին՝ 10-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև տնտեսական կապերի վերաբերյալ:

«Նորավանք» գիտակրթական
հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի նախագահ
ՀՀ վարչապետ՝

Ա. Մարգարյան